# Օ Ր Ա Կ Ա Ր Գ

**«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»**
**պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝**
2019 **թվականի ապրիլի 12-ի, ժամը 14:00-ի նիստի**

1. **Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների ձևավորման մասին:**
   Զեկուցող՝ ուսումնամեթոդական աշխատանքների գծով պրոռեկտոր **Պ.Ա.Քալանթարյան:**

2. **ՀՊՏՀ գործունեության բարելավման գործողությունների պլանի կատարման ընթացքի մասին:**
   Զեկուցող՝ ուսումնամեթոդական աշխատանքների գծով պրոռեկտոր **Պ.Ա.Քալանթարյան:**

3. **Համաձայն ՀՀ կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1121 որոշմամբ հաստատված «Գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման կարգի»՝ ՀՀ 2020 թ. պետական բյուջեից ֆինանսավորում ստանալու նպատակով գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման ծրագրերի հայտերը երաշխավորելու մասին:**
   Զեկուցող՝ գիտության և ասպիրանտուրայի բաժնի պետ **Խ.Ա.Մխիթարյան**:

   1) **«Կառավարչական որոշումների ընդունման և իրագործման կառուցակարգերի ու հաղորդակցության տեխնոլոգիաների ազդեցությունը ՀՀ հանրային կառավարման արդյունավետության վրա»** (ծրագրի գիտական ղեկավար՝ կառավարման ամբիոնի պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր, «ՀՊՏՀ ամբիոնի պատվավոր վարիչ» **Յուրի Միքայելի Սուվարյան**):

   2) **«ՀՀ տնտեսության խոցելիությունը ներքին շոկերից և մակրոտնտեսական կայունության ապահովման հնարավորությունները»** (ծրագրի գիտական ղեկավար՝ մակրոէկոնոմիկայի ամբիոնի վարիչ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ **Կարեն Համլետի Գրիգորյան**):

   3) **«Սոցիալական կառավարման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում»** (ծրագրի գիտական ղեկավար՝ կառավարման ամբիոնի դոցենտ, տնտեսագիտության թեկնածու **Արևիկ Ռազմիկի Հովհաննիսյան**):

   4) **«Նյութական մոտիվացիայի բարձրացման հիմնախնդիրները ՀՀ բարձրագույն կրթության ոլորտում»** (ծրագրի գիտական ղեկավար՝ հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետի դեկան, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ **Մերի Վազգենի Բաղալյան**):

4. **Ընթացիկ հարցեր**:

1) «**Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի առկա ուսուցմամբ մագիստրատուրայի 2019**-2020 **ուսումնական տարվա ընդունելության կանոնակարգը**» **քննարկելու և հաստատելու մասին**:
   Զեկուցող՝ ուսումնամեթոդական աշխատանքների գծով պրոռեկտոր **Պ.Ա.Քալանթարյան**:

2) **«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպությունում ուսանողների վերականգնման, ներքին տեղափոխության, առարկայական (ծրագրային) տարբերությունների հանձնման և ուսման վճարի հաշվարկման ընթացակարգը» քննարկելու և հաստատելու մասին**:
   Զեկուցող՝ ուսումնամեթոդական աշխատանքների գծով պրոռեկտոր **Պ.Ա.Քալանթարյան**:

3) **Գիտական խորհրդի՝** 2018 **թվականի մարտի** 5-**ի նիստում (արձանագրություն N** 5) **հաստատված** «**Ավարտական աշխատանքի կատարման և պաշտպանության մեթոդական ցուցումներում» փոփոխություններ կատարելու մասին**:
   Զեկուցող՝ ուսումնամեթոդական աշխատանքների գծով պրոռեկտոր **Պ.Ա.Քալանթարյան**:

4) **Գիտական խորհրդի՝ 20**18 **թվականի մարտի** 5-**ի նիստում (արձանագրություն N** 5) **հաստատված** «**Մագիստրոսական թեզի կատարման և պաշտպանության մեթոդական ցուցումներում» փոփոխություններ կատարելու մասին**:
   Զեկուցող՝ ուսումնամեթոդական աշխատանքների գծով պրոռեկտոր **Պ.Ա.Քալանթարյան**:

5) **Ատենախոսությունների թեմաներ և գիտական ղեկավարներ հաստատելու մասին**:
   Զեկուցող՝ գիտության և ասպիրանտուրայի բաժնի պետ **Խ.Ա.Մխիթարյան**:

6) «**Երիտասարդ գիտնական**» խորագրով ՀՊՏՀ ուսանողական գիտական ընկերության 38-րդ նստաշրջանի նյութերի ժողովածուի (472 էջ ծավալով) հրատարակությունը երաշխավորելու մասին:
   Զեկուցող՝ գիտության և ասպիրանտուրայի բաժնի պետ **Խ.Ա.Մխիթարյան**:

**Գիտական քարտուղար՝** **Ն. Հ. Դարբինյան**

2019 թ. ապրիլի 12
Երևան